ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «23» 11 2022թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Արթուր Ավետիսյան (այսուհետ՝ Կատարող, անձնագիր՝ AN0436047, տրված՝ 10.04.2013թ., սոց. քարտ 1804680311) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը իրականացնում է բեռների /գույքի/ բեռնաբարձման, տեղափոխման, բեռնաթափման, կահույքի և այլ կենցաղային շարժական գույքի ապամոնտաժման և տեղափոխման, շինարարական, ինչպես նաև այլ բնույթի աշխատանքներ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 աշխատանքները կատարել անձամբ,

2.1.2 աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան, պատասխանատվություն կրելով ինչպես սկզբնական այնպես էլ վերջնական ժամկետների խախտման համար:

2.1.3 իր միջոցներով վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով տեղ գտած թերությունները,

2.1.4 պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների կատարումը շարունակելու կամ դրանց աննպատակահարմարության մասին:

2.1.5 Կատարողն իրավունք ունի՝

2.1.6 հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով:

2.2 Պատվիրատուն պարտավոր է

2.2.1 կատարողին անհրաժեշտ պայմաններ ստեղծել աշխատանքի կատարման համար,

2.2.2 ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց դիմաց,

2.2.3 վճարել Կատարողի կատարած ծախսերը, եթե աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ է գալիս աշխատանքները շարունակելու անհնարինություն կամ աննպատակահարմարություն՝ Կատարողի մեղքից անկախ հանգամանքների հետևանքով:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3. Օգտագործել աշխատանքների իրավական պահպանության ենթակա արդյունքները:

3. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է պայմանագրի անբաժանելի մաս կազմող կատարողական ակտը երկկողմանի ստորագրելուց հետո՝ ժամավճարային եղանակով՝ աշխատանքի 1 ժամի դիմաց՝ Երևան քաղաքում 3000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով, իսկ ՀՀ մարզերում՝ 3500 (երեք հազար) ՀՀ դրամի չափով (առանց հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների):

3.1.1. Պայմանագրի 3.1-րդ կետովնախատեսված վճարվող գնի մեջ ներառվում է նաև աշխատանքի կատարման վայր (ՀՀ մարզեր) հասնելու համար առաջացող տրանսպորտային ծախսերը:

3.2 Հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների հետ կապված հարցերի լուծման պարտականությունը դրվում է Պատվիրատուի վրա, եթե վճարման պահին կողմերն այլ համաձայնության չգան:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

4.2 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1 Պայմանագիրը կարող է ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծվել Պատվիրատուի կամ Կատարողի կողմից: Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները: Պայմանագիրը լուծելու դեպքում կողմերը պարտավորվում են առնվազն երեք օր առաջ ծանուցել միմյանց:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերը առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

6.2 Բոլոր այն պայմանների դեպքում, որոնք նշված չեն Պայմանագրում, Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթներով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41ա ՀՀ. ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011288025 ՀՎՀՀ 01223338 ՀՀ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա.Ավագյան _____	Արթուր Ավետիսյան Հ/Հ 1570086990090200 «Ամերիաբանկ» ՓԲԸ ք. Մասիս, գ..Հայանիստ 17 փող., տուն 15 անձնագիր՝ AN 0436047 տրված՝ 10,04.2013թ. 044 կողմից Ա. Ավետիսյան_____